


Մաս և ամբողջ


Թվի մաս գտնելը



$\frac{1}{2}$	$\frac{1}{2}$
---------------	---------------

Եթե քառակուսին բաժանենք 2 հավասար մասի, ապա այդ մասերից յուրաքանչյուրը կլինի քառակուսու $\frac{1}{2}$ մասը:

$\frac{1}{2}$ -ը կարդում ենք մեկ երկրորդ:



$\frac{1}{2}$ մաս կամ կես:

$\frac{1}{2}$ -ը հասկանանք այսպես՝ ամբողջը բաժանել 2 հավասար մասի և վերցնել 1 մասը:

$\frac{1}{4}$	$\frac{1}{4}$
$\frac{1}{4}$	$\frac{1}{4}$

Եթե քառակուսին բաժանենք 4 հավասար մասի, ապա այդ մասերից յուրաքանչյուրը կլինի քառակուսու $\frac{1}{4}$ մասը:

$\frac{1}{4}$ -ը կարդացվում է մեկ չորրորդ:

$\frac{1}{4}$ մաս կամ մեկ քառորդ մաս:


$\frac{1}{4}$ -ը հասկանանք այսպես՝ ամբողջը բաժանել 4 հավասար մասերի և վերցնել 1 մասը:

$\frac{1}{16}$ ասելով հասկանում ենք ամբողջը բաժանել 16 հավասար մասերի և վերցնել 1 մասը:


Առաջադրանքներ

1. Պատկերներից յուրաքանչյուրի վրա նշված մասն արտահայտի թվերով:


ա)



բ)




գ)



դ)



ե)



Թվի մաս գտնելը

Օրինակ՝ 36-ի $\frac{1}{6}$ -րդ մասը կլինի՝

$$36:6=6$$

2. Գտիր թվի նշված մասը:

160-ի $\frac{1}{4}$ -րդ մասը

250-ի $\frac{1}{5}$ -րդ մասը

3000-ի $\frac{1}{10}$ -րդ մասը

180-ի $\frac{1}{9}$ -րդ մասը

3. Հաշվիր:

245 կգ-ի $\frac{1}{5}$ -րդ մասը

24 ժ-ի $\frac{1}{4}$ -րդ մասը

210 դրամի $\frac{1}{7}$ -րդ մասը

4. Արտահայտիր նշված միավորներով:

$$\frac{1}{6} \text{ ժ} = \text{ր}$$

$$\frac{1}{5} \text{ կմ} = \text{մ}$$

$$\frac{1}{12} \text{ օր} = \text{ժ}$$

$$\frac{1}{4} \text{ տ} = \text{ամիս}$$

$$\frac{1}{10} \text{ ց} = \text{կգ}$$

$$\frac{1}{20} \text{ մ} = \text{սմ}$$

